

7 285

5215

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆ Ն 4

83

Պրուեսարներ բոլոր յերկրների - միացե՛ն!

Ե. ԱՌԻՐԵՆ

ԱՐԵՎԱԿ  
ԶՈՒՐԱԲՅԱՆ

ՅԿՊ19

9-996

ԹՐԱՆԻՑ — 1927

10 APR 2013

5215

Е. Сурен  
Аршак Зурабов

(Его место в рабочем  
движении Закавказья)

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատմական խնդիրների վերլուծման առիթով  
յևստագարձ հայացք ձգելով վերջին ավելի քան քա-  
ռորդ դար անցյալի վրա,—մենք մի քանի անգամ  
արդեն նկատել ենք, թե «հայ իրականության» ա-  
ռաջին բարչեկները, առաջին մարք-  
սիստները, հեղափոխական մարքսիստ-  
ները յեղել են Ստեփան Շահումյան, Սուրեն Սպան-  
դարյան և Բոգդան Կնունյան։ Եեշտել ելինք, թե վեր-  
ջինս մինչև իր սալթարումը։

«Հայ իրականության» առաջին մարք-  
սիստների շարքում իր հարկավոր տեղն ունի նաև  
Արշակ Զուրաբյանը։ Անկատկած և նրա շատ նկատե-  
լի աշխատանքը մեզ համար մինչև Ռուսաստանի Սո-  
ցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության  
բաժնումը բարչեկներ ու մենց ենիկ հասովածների  
և Արշակի հարումը վերջին հոսանքին։

Դժբախտաբար մեր լայն խավերին զգալի  
շափով ծանոթ չեն «հայ իրականության» ստագին  
մարքսիստների կյանքն ու գործունելությունը, նրանց  
տեղն ու գերր մասնավորագես Անդրկովկասի բան-  
վորական շարժման մեջ։ Հանցաները մատամբ մերն ե,  
վոր մինչև այժմ չենք կարողացել տալ—ինչպիս կա-  
տելին առաջ — «հանրամատների» կամ «հժանագին»  
հրատարակությամբ գրույիներ՝ նվիրված անցած  
դեպքերին ու դեմքերին։



Գրադիտ № 452.

Տիրաժ 1000.

Պատմեր № 751.

Տպարան «Զարյա Վաստոկա»-ի, Թիֆլիս։

43373.63 / 3728 - 21

Ներկա բրոշյուրի մեջ նույնությամբ տալիս ենք  
մեր հողվածը՝ զրված Արշակ Զուրաբյանի մանվան  
յերրարդ տարվա առեթով և տպագրված դեռ 1923 թ.  
հունվարի 10-ին «Կարմիր Աստղի» № 6 (555)-ում:

Արշակ Զուրաբյանի դեմքը Անդրկովկասան  
բանվորական շարժման մեջ միանգամայն նիշտե զրծ-  
ված չորս տարի առաջ զրված մեր այդ հող-  
վածում: Շատերը այն համարում ելին չափազանց  
խիստ, մանավանդ ի նկատի առնելով նրա մղած պայ-  
քարը Յերեանում դաշնակների ու սպեցիֆիկների դեմ  
իր մահվանը նախորդող շրջանում:

Մենք այդ կարծիքի չենինք և այսոր եւ չենք  
հրաժարվում մեր գնահատականից:

Ե. Ա.

## ԱՐՇԱԿ ԶՈՒՐԱԲՅԱՆ

Երա տեղը Անդրկովկասի բանվորական շարժման մեջ  
—

Կիբակի, հունվարի 7-ին, Պրոֆմիության խորհրդի  
դահլիճում, Արշակ Զուրաբյանի մի յերկու համախոհներ  
—Գևորգ Ղարաջյան, Ղազար Տեր-Ղազարյան, և Խոն  
Ելլակյան, Մատթեոս Դարրինյան—կազմակերպել ելին  
մահվան յերրորդ տարելիցի առթիվ հուշանդես:

Լսելով Արշակի նախկին զինակիցների ճառերը,  
վորոնց մեջ քիչ չելին այլևս անհմաստ երիվոք խոս-  
քեր, մենք անկեղծ կերպով ցավում եյինք, վոր Զու-  
րաբյանի հիշատակին հարգանք կազմակերպելու նա-  
խաձեռնությունը իր վրա չեր վերցրել մեր մի վորեւ  
կազմակերպություն, վոր հեղափոխական Արշակի հա-  
րուստ գործունելության վերլուծումն և ուրվապատճե-  
մինակված եր քաղաքականական մեռած կամ «չեղոք»  
մարդկանց, վորոնց գունատ խոսքերը մեղ չտվին և  
չելին եւ կարող տալ հեղափոխականի անհանդիս  
հոգու ճշգրիտ պատկերը: Բնական ե, վոր պահանջկոտ  
ունկնդիրները հետացան անգոն, վորովհետև «նախկին  
զործիչներին»—վորոնք իրենց մեջ ույժ են գտնում  
յերրորդ կողմ լինել այս կատաղի պայքարի ժամանակ,  
յերբ մղվում ե վճռական կոխվ պրոլետարիատի վերջ-  
նական իդեալի հաղթանակի համար,—կոչված չելին

գերազանցապես մարտիկ Արշակի հեղափոխական ծառայությունները զրվասելու:

Արշակը իրավունք ունի պահանջելու մեղնից ավելի ուշագիր վերաբերմունք դեպի իր հիշատակը»:  
Մենք գտնում ենք, վոր այսորվա քաղաքական ակտիվ գործիչներին և (վորոնց մեջ քիչ չեն Արշակի աշակերտները) վերապահված քննության առնելու Անդրկովկասի իրականության մեջ գործած հեղափոխականների՝ անցյալը և բնորոշելու յուրաքանչյուրի տեղը մեր բանվորական շարժման մեջ:

Ֆիզիքապես ապրել շարունակող քաղաքական դիակները չեն կարող հասկանալ նույնիսկ մեռած ըմբուռ գովեներին:

Դեռևս 1920 թվի սեպտեմբերին պատմական կրեմը գեկուցանելով Համառուսական կուսակցական կոնֆերանսին ընդհանրապես հեղափոխական շարժման և մասնավորապես մեր կուսակցության պատմությունն ուսումնասիրող հանձնաժողովի — «Իստավարտի» անհրաժեշտության մասին՝ ընկ. Պակրովսկին նախազգուշացնում եր մեզ, վոր չվստահենք ուրիշներին — «բարեմիտ» չեղուքներին և մանավանդ մեր կուսակցական հակառակորդներին — գրելու Ռուսաստանի պրոեւստիրատի գասակարգային հերոսամարտի պատմությունը: Գիտնական պատմաբանն ընդգծում եր, վոր մենք պետք ե ամենալուրջ ուշագրությունը գարձնենք խնդրի այս կողմի վրա, վորը թե այժմեական և և թե պատասխանառ առաջակա սերնդի հանդեպ:

Արշակի հիշատակին խոսողների ճառերը մեզ մէ անգամ ել ապացուցեցին, թե վորքան միշտ և մոտեցել գործին մեր կուսակցական կենտրոնը հիմնելով

«Իստավարտը» և թե ինչպես կարող և խեղաթյուրվել բանվորական բմբառացումի պատմությունը, յեթե նրա զրի առնողները կոմունիստներ չինեն:

Արշակը բարձրեկիկ չեր. նա մինչեվ վերջին շունչը մնաց մինչեկիկ:

Բայց այդ հանգամանքը չի կարող խոշընդուն հանդիսանալ կոմունիստի համար գնահատության առնելու նրա գործունեյությունը: Մեր կենարոնը այդպիսի գնահատման ցայտուն որբնակներ և տվել:

Բարձրեկիզմը շատ քիչ հակառակորդ և ունեցել Պետականութիւնի շափ հեղինակավոր կամ կառցկու պես վաստակավոր: Սակայն այդ չի խսնդարում մեզ առանձին հարգանքով վերաբերվելու գեպի Պետականութիւնի հիշատակը (տես ամբողջապես Պետականութիւն նվիրված «Պող զնամենեմ մարքսիզմ» և 6), միլիոնավոր որբնակներով ապարածելու նրա մեծարժեք ուսումնասիրությունները զիտական սացիալիզմի մասին, մեր կոմունիստական յերիտասարդությունը գաստիարակությունը առաջինաբար նրա անթիվ սքանչելի մարքսիստական յերկերի վրա: Նույնը մենք կարող ենք ասել կառցկու վերաբերմանը, վորը հեղափոխական պրոլետարիատի համար իսկապես մեռավ այն որը, յերը, փոխանակ Հոկտեմբերյան Մոսկվա վագելու, հակառակ իր 70 տարիների շաապեց հեռավոր Թիֆլիս՝ գրկախառնվելու «սոցիալիստական զրախտի» (?!) մեզ քաջ ծանոթ հերոսների հետ, վրացական մինչեկիզմի խայտառակիրականությամբ «զիտնականորեն» հիմնավորելու գալիք իրավակարգի գեղեցկությունը և պրոլետարական դիկտատորայի «անհեթեթությունը»:

11.

Արշակ Զուրաբյանը Հովտեմբերյան հեղաշրջումից հետո – միացած Ժորդանիս, Չիսիձե, Ծերեթելի, Ղարաջանի, Տեր-Ղաղաբյանի և նմանների հետ – վրեւուական կերպով մեջք դարձրեց բալշելիկությանը:

Նա փախավ – ինչպես շատերը – Պետրովբաղից թիֆլիս, և այսուղի մենշեիկյան բանվորական խորհրդում կարդաց իր պատմական գեկուցումը մայրաքաղաքի անցուղարձի մասին։ Շատերն անշուշտ հիշում էն նրա անհաշտ զիրքը։ Նա փորձված զեկուցանող եր, տեմպերամենառվ հսկոր և զիտեր իր հակառակորդներին հարկավոր չափով խոցել։

Արշակի հնուազա զործունեցության մեջ չկա և վոչ մի մոմենտ, վոր թույլ տար մեզ ասելու, թե նա շեղմել և իր մենշեիկյան զիրքերից։

Հիմնական սխալ կը լիներ վրացական մենշեիկմի գեմ պայքարելու կամ մոռւսաստանի որիենտացիայի կողմանկից լինելու մեջ տևնել Զուրաբյանի «բալշելաւությունը»։

Նա գեմ եր հեղափոխական մոռւսաստանից և ոռւսական պրոլետարիատից հրաժարվելու մտքին։ Բայց «հեղափոխական» և «պրոլետարիատ» ասելով նա չեր հասկանում կոմունիստական մոռւսաստանը՝ բալշելեների յիտերց գնացող պրոլետարիատը, այլ այն յիշեալայալ մոռւսաստանը, վոր «անխուսափելիորեն» պետք և ծներ Հյուսիսի և Անդրկովկասի մենշեիկությունը, այն կարծեցյալ պրոլետարիատը, վոր պետք և վերադառնար վետրվարյան հեղափոխության նվաճումներին, ամեն կարգի բուրժուական «հավասարու-

թյան» և «աղաւատության»։ Խոսքի, մամուլի, ժողովի, քվեի և այլն, և այլն։

Նա խորապես հավատում եր մենշեիկյան «դեմոկրատիայի» հաղթանակին ընդգեմ «ուզուրպատրների» ինչպես աջից, նույնպես և ձախից, ու վախում եր, վոր մոռւսաստանից անջատված Անդրկովկասը զրկված մնա հաղթանակող մենշեիկյան զեմոկրատիայի բարիքներից։

Արշակը կողմնակից եր Անդրկովկասի առանձնաւցումն, «չեղոքացումին», քանի այդ «անկախությունը» կրում եր լոկ «Ճեսական բնույթ» (Անդրկովկասի Սեյմի ժամանակ) և «ապահովագրում» եր մեր յերկիրը բաւշելիյան թույնի վարակումից։ Բայց հենց վոր անջատումը խորացավ, Բրեստից ավելի խայտառակ դաշինք կապվեց Տրապիզոնում և առաջին սխալ քայլից հնառ արվեց յերկրորդ ու տրամաբանորեն անխուսափելի քայլը, Արշակը զգաց, վոր իր փայփայած ոռոսկան մենշեիզմը այլասերվում և, զառնում վրացական նացիոնալ-մենշեիզմ և սակագում «վրացական Դաշնակցություն»։

Նա, Մոռւսաստանի սոցիալ-դեմոկրատը, վոր լոկան իր սանկցիան եր տվել ամբողջ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատիայի անունից Սեյմում արված Ռուբաշիլու ցինիկ հայտարարությանը, թե «ոռուսական որիենտացիան՝ սեակցիոն որիենտացիայն», – վրդովկեց, յերբ ժամանակ վաստակելու համար արվող զատարի թվացող հայտարարումներից ժորդանիան ու Բամիշշվիլին անցան գործի։ Յեկ ծայր արվեց վրասանի նացիոնալ-մենշեիզմի և ոռուսական ինտերնացիոնալ-մենշեիզմի ներքին պայքարին։

Մարտովը նախասում եր ժորդանիա ու ընկ. և  
իր հավանությունը տալիս Արշակի գործելակեր-  
պին:

Կառուցկի-Վանդերվելդ-Ռենոդի իրենց հրացմուն-  
քքն եյին հայտնում վրացական մենշեկոմի հերոսներին  
և մերժում զո՞հ դառնալ Արշակի «միջկուսակցական  
ինտրիգներին»:

Վրացական մենշեկոմի և ոռւսական մենշեկոմի  
պայքարն Անդրկովկասում, վորտեղ կոմունիստներս  
որենքից գուրս եյինք հայտարարված, որյեկտիվ կեր-  
պով նպաստում եր մեր գործին, վորովհետեւ հակառակ  
բանակովող կողմերի ցանկության՝ նա մերկացնում  
եր մեր բանվոր-գյուղացիական մասսաների առաջ  
ամբողջ մենշեկոմի (վրացական թե ոռւսական, Ծե-  
րեթելի-Լիբերի թե Զուրաբով-Մարտովի) «հեղափո-  
խական գործելակերպի» սնանկությունը:

### III.

Վորովհետեւ այսոր կոմունիստական կուսակցու-  
թյունը բանվորական շարժման վոչ միայն պատմու-  
թյունն և անում, այլև այդ պատմությունը արձանա-  
գրում, մենք մի փոքր ավելի կանգ կառնենք Արշակի  
անցյալ գործունեյության այդ կարևոր ժամանակա-  
շրջանի վրա, մի յերկու խոսքով կհիմնավորենք մեր  
պնդումները:

Նախքան Անդրկովկասի սովորիվացիան, հակա-  
ռակ մենշեկ-դաշնակ-մուսավաթյան գժվարին իրա-  
կանության, կոմունիստներին աջողվել եր բեկումն  
առաջ բերել տեղիս պրոլետարիատի շարքերում: Հրա-  
պարակում ծեծվում եյին մի շարք խնդիրներ, վորոնց

մոտեցումը բնորոշիչ եր ամեն մի քաղաքական զործչի  
դիրքի համար: Արշակը չափազանց գյուրազգաց ու  
ակտիվ հեղափոխական եր, վորպեսզի խուսափեր վո-  
րեն հարցի ուղղակի պատասխանից: Այդպիսի անպայ-  
ման կարդինալ հարցերից պետք ե համարել հետեյալ-  
ները: Ի՞նչ վերաբերմունք եր ցույց տալիս Զուրա-  
բյանը գեպի—

1. Կոմմունիստական կուսակցությունը.
2. Կոմինտերնը և գեղին ինտերնացիոնալը.
3. Խորհրդային Ռուսաստանը.
4. մեր արևելյան քաղաքականությունը:

Սրանք այնքան կարևոր խնդիրներ եյին, վոր  
յեթե կարողանանք լրիվ պատասխան գտնել Արշակի  
մոտ, ապա պարզած կլինենք ամեն բան:

Արշակի անմիջական խմբագրությամբ հրատա-  
րակվել են շատ թերթեր՝ «Պայքար», «Մշակ» (մի  
քանի ամիս), «Սոցիալ-Դիմոկրատ» (ոռւսերեն և  
հայերեն), ապա «Նոր-Խոսք»:

Դժվար ե այդ թերթերի մեջ գտնել մի տող  
անգամ, վոր մեզ իրավունք տար յերգակացնելու, թե  
Արշակը լրել ե մենշեկվիլյան դիրքերը բալշեկու-  
թյան սիրո համար:

Պատոնական յենթադրություններ չպետք է  
թույլ տան իրենց Արշակի հարգողները, վորովհետեւ  
նա չափազանց մարզված քաղաքական գործիչ եր,  
կուսակցական ամեն տեսակ բոլով անցած մարտիկ,  
«Փրակցիոներական» նըրբությունները շատ լավ հա-  
կացող և գիտեր իր մտքերը ձևակերպել բավական  
աներկմիտ ու անվախ:

Սկսենք առաջին հայցից.՝ արդյոք փորձեւ մումնատ Արշակը հրաժարվէլ է մեր կուսակցության հայցքին, ըմբանումին, ծրագրին հակադրել իր կուսակցության ծրագրը, ըմբանումը, հայցքը:

Յերբեք:

Անա թե ինչպես եր ձեակերպվում մենշեկելան գործելակերպը, «Նոր-Խոսք»-ի առաջին Ա-ի առաջնորդովում: Խորհրդային Ռուսաստանի հայցին մի քանի շաբթօն կոմպլիմենտներ շոայլելուց հետո, այդ credo-ում ասված և բառացի.՝

«Սակայն Սովետական իշխանությունը Ռուսաստանում կոմունիստական կուսակցության իշխանությունն է: Նրա պայքարի, քաղաքական ստեղծագործության մեթոդները՝ այդ կուսակցության հեթոգներն են. նրա սոցիալիստական շինարարության գործի ըմբռնումը՝ կոմունիստական կուսակցության ըմբռնումն է: Մենք այստեղ լինելու յենք շատ հաճախ քննադատի գերում և մեր հայցքը, մեր ըմբռնումը այդ խնդիրների, մեր կուսակցական ծրագրը հակադրելու յենք նրա հայցքին, նրա ըմբռնմանը, նրա ծրագրին»:

Միանգամայն պարզ է ձեակերպված Զուրարյանի դիրքը մեր հանդեպ:

Պակաս ոելյեփ կերպով չե արձանագրված երկրորդ կետի պատասխանը:

Հայանի յե, վոր Կառուցկու, Վանդերվելդի, Ռենդիլի և նմանների ճանապարհորդության գլխավոր նպատակն եր մի հակացուց կազմակերպել Խորհրդային Ռուսաստանի և նրա զեկավար կուսակցության գեմ:

Ի՞նչպես եր դիմավորում Զուրարյանի թերթը: Ահա (Հ. 4-ում).—

«Վողջույն նրանց:

Այսոր առաջին անգամ մեր անկախ դոյնթյան որից սկսած, Յեվրոպայից մեզ բարի լուր և հասնում՝ զալիս են նոր հյուրեր, բայց այս անգամ անկեղծ հյուրեր ու լավ բարեկամներ:

Այսուղից և միայն այնտեղից եյինք սպասում մենք շարեկամական ոգնության և եղբայրական պաշտպանության:

Այսոր իրականանում և այդ ցնորքը:

Յեվրոպական բանվորները իրենք են զալիս մեզ մոտ»:

Արշակի թերթը մտահոգում եր, վոր այցելությունը չահնմանափակի միայն մենշեկելան Վաստանով՝ այլ շարունակի մինչև «մանավանդ Հայաստանը»:

Նույն համարի մեջ խոսվում և նաև յերկու ինտերնացիոնալիների մասին, յերկունեկու ինտերնացիոնալը գենու չեր թխված:

«Նոր-Խոսք» հետեյալ կերպով եր բացարուս մեզ իր սերը «Լոնդոն թե Մոսկվա» հոգվածում.—

«Յեթե Սոսկվայի ինտերնացիոնալի առաջին կոնքրեսը, վոր յեր ընդգրկում յեվրոպական բանվորության լայն շրջանները, նոռեանության տեղիք եր տալիս և հավասարանալ չեր լինում, վոր առհասարակ ներկա պայմաններում հնարավոր և լսկական միջազգային համերաշխություն հաստատելու—տպա այժմ, յերբ Մոսկվայի յերկրորդ կոնքրեսին հավաքվել եյին վոչ միայն ամրող

աշխարհի կոմունիստական պատգամավորները, այլև սուսական կոմունիզմի ծրագիրն ու զոր ծելակերպը ժխտող սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները, — Մոսկվայի ինտերնացիոնալը դառնում և բանվոր զաստկարգի միջազգային քաղաքականության գործոն»...

Արշակի թերթը Յերարդ Ինտերնացիոնալին, մեր կոմինտերնին իր հարելը պայմանավորում եր Կոմունիստական կուսակցության ծրագրի ու գործելակերպի ժխտմամբ և վոչ-կոմունիստական (մենշենկեներների) կուսակցությունների մասնակցությամբ...

Նա մոռացել էր Խսաղլկոմի մշակած պարտագիր 21 հոգվածները, մոռացել Կոմինտերնի ամբողջ հյությունն ու պատմությունը:

Շատ ուրույն սպասելիքներ ուներ Արշակը Անդրկովկասի սովետիզացիայից, վորքան այդ կարելի յե դատել նրա յերկու զինակիցների և հոգվարի 7-ի ճառախոսների հոգվածներից:

Խորհրդային Ռուսաստանին հետեւալ պահանջներն եր Ներկայացնում «Նոր Խոսք»-ում՝ «Քաղաքացին» իր «Հայաստանի բլոկադի մեջ».

«Ռուսաստանը պարտավոր եր առաջինը հասկանալ հայ զեմովկրատիայի, հայ աշխատավոր տարրերի կրած տանջանքները և ընդառաջ զնալ նրա կենսական կարիքներին»:

Ինչպես տեսնում ենք, մեղադրանքներն ուղղվում եյն քաջնակցական Հայաստանին, այլ Խորհրդային Ռուսաստանին, և արցունքն աչքերին յեզրակացնում եր «Քաղաքացի»-ն. —

«Դժբախտաբար Ռուսաստանը անտարբեր հանդիսատեսի դիրքի մեջ է հանդեպ այն տանջանք-

ների, վոր կրում են Հայաստանի աշխատավոր տարրերը»:

Նույն համարում «Գնունի»-ն իր «Նոր արհավիրք» հոգվածում պակաս խստությամբ չեր քննադատում Խորհրդային իշխանության արեելյան քաղաքականությունը, վոր՝ ըստ նրա՝ վերջ ի վերջո սոցիությունը չեր, այլ պանիստամիզմ. —

«Ասկայն Ռուսաստանը պիտի զգար, վոր չի կարելի վարել արեվելյան քաղաքականություն հայ աշխատավոր տարրերի դիակների վրայով: Սոցիության կամաց պիտի հասկանա, վոր թյուրք փաշաները ձգտում են ոգտագործել սովետական իշխանությունը իրենց պանիստամական ձգտումների համար»:

Արշակը պակաս կատաղի հոգված չփեց «բալեկվելյան բարբարոսության («Վարվարություն») գեմ ոռւսերեն «Սոցիալ-Դեմոկրատ»-ում, յերը մեր իշխանությունը Պետրովրազում և Մոսկվայում բացեց «Ակադեմիկ կենտրոնի» — պրոֆ. Շեպկինի և մյուսների դավադրությունը Խորհրդային իրավակարգի գեմ և վճռական միջոցներով ճնշեց այն:

Մենք չենք ուզում այս միանգամայն որյեկտիվ արձանագրված զոկումենտներին ավելացնել այն կոնկրետ, մեզ հայտնի շատ փաստեր, ապացուցելու համար, վոր Արշակը մինչև վերջը մնաց համոզված հակառակորդը բարեկամի և իր ամբողջ հեղինակությամբ շատ հաճախ խանգարեց մենշենկենտերնացիոնալիստ բանվորներին, յերեմն ել ինտելիգենտներին, որ առաջ կտրել իրենց կապերը մարտովականության համեմությունը մեզ համար:

## IV

Արշակը համոզված մենշիկի էր: Սին աշխատանք և այսոր զբաղվել, թե ում հետ կը լիներ նա միք որերին, յիթե անժամանակ մահը նրան գերեզման շիցիներ:

Բայց Արշակը այնպիսին, վորովիսին եր իրականության և վոչ թե հունվարի 7-ի ճառախոսների յիրեակայության մեջ, այնուամենայնիվ թանգ և մեզ համար, և անտ թե ինչն:

Յերբ մի թուոցիկ յետաղարձ հայացը ենք ձգում վերջին քսան-քսանենինդ տարվա Անդրկովկառ-սի բանվորական շարժման վշտու պատմության վրա և փորձում ենք թվել սոցիալիզմի առաջին շարքերի մարտիկների անունները, ապա մեր առաջ անփուսամ-փելիորեն ծառանում և Զուրարյանը—հակառակ նրա հատակա «Քրակյաններական» տարակարձիքության և վերջին տարիների շեղումին—իր բազմաշխատ հեղա-փոխական անցյալով, վորի մեջ մեզ համար ամենից թանգարժեքը նրա համառ պայքարն եր բանվորու-թյան դասակարգային գիտակցության և միջազգային համերաշխության ամբապնոման ապարարիզում:

Արշակը զիտական սոցիալիզմի առաջին ուսուցիչներից եր մասնավորապես հայկական խավար ու աղքատիկ իրականության մեջ:

Մատրիկեցեք 900-ական թվականները, յիրը ներկա որերի մասին յերազեն անգամ մահացու հանցանք եր համարվում թե ցարական պետականության և թե մեր ճանձացած սեմինտրիստական հասարակու-թյան կողմից: Սոլոլակի միջավայրում և անձնական

վայելքների տվյալների մեջ ծնվուծ Արշակը, հրա-ժարվելով իր դասակարգից և ամեն ինչ մոռացած, վորպես անխօնչ ուսուցիչ նախ բանվորական և յերի-տասարդական խմբակներում, ապա ավելի լայն հավա-քույթներում արթնացնում ու կռում-կռփում եր շահա-գործվածների մեջ բոլորի ու ըմբոսացումի հեղափո-խական կամքը:

Մենք ներողամտության և չափաղանցության վորով չենք տոգորված հոգուտ մեր հակառակորդների, ամեն կարգի մենշիկների: Բայց վորպես փաստ պետք և արձանագրենք, վոր Արշակը դաստիարակել և մի քանի սերունդ մարքսիստորեն մտածող բանվոր-ների, վորոնք իրենց ուսուցից յուրացրած ուսմոնե-րից մինչև վերջը հանեցին տրամարանական յերա-կացությունը և այսոր կոմունիստական կուսակցու-թյան և Խորհրդային իշխանության անձնվեր աշխա-տողների շարքերուն են գտնվում:

Արշակը անփոխարինելի յիր մասնավորապես նա-ցիոնալիզմի գեմ պայքարելիս:

Նա մինչև ուզն ու ծուծը լինելով ինտերնացիո-նական՝ որդանապես չեր կարողանում հավասար չափով մարսել ինչպես զանակցական զոլովիական նացիո-նալիզմը, նույնպես և քողարկված հայկական նացիո-նալ-առցիալիզմը (սպեցիֆիզմը) ու վրացական նացիո-նալ-մենշիկզմը:

Վորպիսի կծու լեզու և անողոք զրիչ և մաշել Արշակը—Շահումյանի և Սպանդարյանի կողքին—մեր-կացնելու հայկական մասսաների առաջ մի կողմից Դաշ-նակցության հակա-հեղափոխական ելությունը և

37 28- 91

## IV

Արշակը համոզված մենշևիկ էր: Սին աշխատանք և այսոր զբաղվել թե ում հետ կը լիներ նումեր որերին, յեթե անժամանակ մահը նրան գերեզման շիֆեցներ:

Բայց Արշակը այնպիսին, վորոտիսին եր իրականության և վոչ թե հունվարի 7-ի ճառախօսների յերեակայության մեջ, այնուամենայնիվ թանգ և մեզ համար, և ահա թե ինչն:

Յերբ մի թուուցիկ յետաղարձ հայացք ենք ձգում վերջին բան-քանինեինդ տարբա Անդրկովկասի բանվորական շարժման վշու պատմության վրա և փորձում ենք թվել սոցիալիզմի առաջին շարքերի մարտիկների անունները, ասկա մեր առաջ անխուսափելուն ծառանում և Զուրաբյանը—հակառակ նրա հետազա «Փրակցիաներական» տարակարձիքության և վերջին տարիների շեղումին—իր բազմաշխատ հեղափոխական անցյալով, վորի մեջ մեզ համար ամենից թանգարժեքը նրա համառ պայքարն եր բանվորության դասակարգային գիտակցության և միջազգային համերաշխության ամրապնդման ասպարիզում:

Արշակը զիտական սոցիալիզմի առաջին ուսուցիչներից եր մասնավորական հայկական խավար ու աղքատիկ իրականության մեջ:

Մարքերեցիք 900-ական թվականները, յերբ ներկա որերի մասին յերազելն անզամ մահացու հանցանք եր համարվում թե զարական պետականության և թե մեր ճանձագած սեմինտրիստական հասարակության կողմից: Առլուսկի միջավայրում և անձնական

վայելքների ավլալների մեջ ծնված Արշակը, ճրաժարվելով իր գասակարգից և ամեն ինչ մռացած, վորպես անխօնջ ուսուցիչ նախ բանվորական և յերեակայութական խմբակներում, ապա ավելի լայն հավաքույթներում արթնացնում ու կոռում-կոփում եր շահագործվածների մեջ բողոքի ու բմբոսացումի հեղափոխական կամքը:

Մենք ներողամտության և չափազանցության վորով չենք տոգորված հսկուածեր հակառակորդների, ամեն կարգի մենշեկիկների: Բայց վորպես փաստակաք և արձանագրենք, վոր Արշակը գաստիարակել և մի քանի սերունդ մարքսիստարեն մատադոր բանվորների, վորոնք իդենց ուսուցից յուրացրած ուսմունքների մինչեւ վերջը հանեցին տրամաբանական յեզրակացությունը և այսոր կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության անձնվեր աշխատողների շարքերուն են գանգում:

Արշակը անփոխարինելի յեր մասնավորակիս նացիստիզմի դեմ պայքարելիս:

Նա մինչեւ ուղն ու ծուծը լինելով ինտերնացիոնալիստ՝ որդանապես չեր կարողանում հավասար չափով մարսիկ ինչպես գաշնակցական զորոգիական նացիոնալիզմը, նույնապես և քողարկված հայկական նացիոնալ-սոցիալիզմը (սպեցիֆիզմը) ու վրացական նացիոնալ-մենշեկիզմը:

Վորաբիսի կծու լեզու և անողոք զրիչ և մաշել Արշակը—Շահումյանի և Սպանդարյանի կողքին—մերկացնելու հայկական մասսաների առաջ մի կողմից Դաշնակցության հակա-հեղափոխական հյությունը և

3728-91

մյուս կողմից հայկական սպեցիֆիզմի հակամարք-սիստ ու վնասակար ընույթը:

Նույնիսկ վերջին որերը, յերբ Արշակի գոյությունն այլևս անտառնելի դարձավ իր յերեկվա մը-տերմ զինակիցներ ժորդանիտա-Ռամիշվիլու համար և նա քշվեց գաշնակցական Յերեվան, այստեղ նրա ներկայությունը ամենից ավելի նեղում եր Բախչի Իշխանյանին և Դավիթ Անանունին, վորոնք սպեցի-ֆիզմի Բագմի և Թիֆլիսի անհաջող փորձերից հետո՝ մի վերջին փորձն եյին ուղում կատարել գաշնակցա-կան մայրաքաղաքում: Մենքնից շատերը հիշում են այդ ընկերության ախրահոչակ գասախոսությունները: Դավիթ Անանունը պարլամենտի սրանի ամբիոնից քա-րոզում եր իր միամյտ ունկնդիրներին և ի հարկե գաշ-նակցականների ծափերի տակ՝ հրաժարվել Դաշնակ-ցության վերաբերյալ մեր «նախապաշարումներից», համարել այն հսկելիների ու հսկելիների նման մի «սո-ցիալիստական» կուսակցություն և միասնական ֆրոնտ կազմել «հյուսիսի բարբարուների» գեմ, վորոնց առաջ-նորդ «մի խնչ-վոր» կենքնի գրվածքները «նա» - Դա-վիթ Անանունը նույնիսկ չի արժանացրել ընթեր-ցումի...

Այսքան լիտի վոճով եյին հանգես գտլիս սպեցի-ֆիկները Յերևանում նախքան Արշակի այնտեղ աքսորվել:

Վերջինիս ներկայությունը չափ դրեց Բախչի և Անանունի՝ ունկնդիրների ագիտության վրա հաշված՝ սանձարձակ լիզմին: Բավական եր Արշակին վորպես սոսկ հաղիսատես մտնել դահլիճը, վոր մեջանական սոցիալիզմի այդ զույգ-հերոսները իրենց անհարմար

զգային ամբիոնի վրա: Յերեք չենք մոռանա Արշակի ժպատկեմ նկատողությունը մեզ Անանունի մի դասախոսության ժամանակ: Խելահմբերը 1919 թ., եսդեկ-ների և հսկելու պատմությունից եր, չենք հիշում ձըշ-տությամբ գասախոսության վերնազիրը: Հետաքրքր-վողները կարող են վերականգնել նույն թվի գեկտեմ-բերի «Յառաջի» ոգնությունը:

— Պօշլամայ, տեսնո՞ւմ ես, թե իմ ներկայու-թյունը ինչքան և նեղում Դավիթին: չե վոր Ռաշիզը կենդանի վկան և անցյալի: Ինչեր չեր ասի նա, յեթե յես այստեղ ներկա չինելի...

Բոլորս զգում եյինք, վոր նա պատմական ձըշ-մարտություն եր ասում:

Յեկ խկացես Դավիթ Անանունը սկսեց խոսել սոցիալ-դեմոկրատիայի անցյալից, շեշտելով Արշակի գերը նրա հիմնագրության շրջանում:

Արշակից հավասար չափով վախում եյին և ակ-նածում թե վրաց մենչեմիկները: Թե գաշնակները և թե սպեցիֆիկները:

## V.

Արշակ Զուրաբյանը Անդրկովկասի բանվորական շարժման մեջ կատարած ունի խոշոր աշխատանք:

Մենք չենք փորձի համարել այն կոմունիս-տական:

Վրացական մենշենիզմից յերես դարձնելուց հետո՝ անձնապես նրա գործունելության մեջ՝ վորպես մինչ-սովետական Թիֆլիսի և Յերևանի իրականության ընդդիմադիր քաղաքական գործչերից չեն փայլուն մոմենտներ, վորոնք որյնեկախիլ կերպով միծապես նը-

պատուել են մեզ գիտազերծ անելու հականեղափոխությունը Անդրկովկասում:

Բայց նրա հիշատակը կը մնա Անդրկովկասի և մասնավորապես հայ սլրուեաբիատի պատում, վորագոս սոցիալիստական շարժման պիոններներից մեկի, վոր գեռ 900-ական թվականներին աշխատում եր մասնակից անել մեզ բոլոր յերկրների շահագործվածների ձգտումին գեղի աշխատանքի թագավորությունը, գեղի սոցիալիստական կուլտուրան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0179428

ԳԻՆԸ 25 ԿՐՊ.

ԱՎԲ  
ՏՄԼ

## ԲԱԼԵՖԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԵՎ ՏԵՍԵԼ

- |   |       |
|---|-------|
| 1. Հեղափոխական եմիզբացիայի յել ուսանողության անցյալից (մի եջ Ստ. Շահումյանի յել Բողդանի Կնունյանի գործունեյությունից) . . . . . | 25 կ. |
| 2. Սուրեն Սպանողաբյան . . . . .   | 25 »  |
| 3. Յերկու տեսակնետ գաղութահայ խնդիրներում   | 25 »  |
| 4. Արշակ Զուրաբյան . . . . .  | 25 »  |